

Հետևեալ դէպքը աւելի կը սաստկացնէ երկու կողմերու հակառակութիւնը:

Նոյն տարուան (1655) Մայիս 30ին Խօճա Աւէտ անուն ազգայինի փեսան Կ. Պոլիս հասնելուն՝ կը բերէ գոյժը Փիլիպպոս կաթողիկոսի մահուան, որ տեղի ունեցած էր Էջմիածնի մէջ Մարտ 24ին, Քառասուն մանկանց տօնին օրը, ու տեղը ընտրուած էր Յակոբ Գ. Զուղայեցի:

Փիլիպպոս կաթողիկոս իր Կ. Պոլիս գտնուած տարին Յովհաննէս Մուղնեցին պատրիարք կարգած էր (1653 Ապրիլ) մէկ տարուան պայմանաժամով: Սակայն երրորդ տարին էր որ ան կը վարէր պաշտօնը՝ կաթողիկոսի հովանաւորութեամբ ու իր կուսակիցներուն պաշտպանութեամբ զօրացած: Փիլիպպոսի վախճանէն ետք վեց ամիս անցած էր ու տակաւին Մուղնեցին Կ. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ յիշատակել չէր տուած նոր կաթողիկոսի անունը: Անիկա կը սպասէր որ գայ օրհնութեան անդրանիկ կոնդակը, որու մէջ կը յուսար հաստատուած տեսնել զինքը պատրիարքական աթոռին վրայ, ինչ որ պիտի նպաստէր առաջին առնելու Եղիազարի ու իր կուսակիցներուն յաւակնութեանց:

Եղիազար Պուղտանի փակուած եկեղեցիներու յիշեալ խնդիրը կարգադրելէն ետք՝ Կ. Պոլսէն մեկնելու նպատակով անցած էր Սկիւտար, պատրաստած էր ձիերն ու ջորիները, բայց կը ձգձգէր իր մեկնումը՝ պատճառելով թէ ուղեկիցներու կը սպասէ: Իր բարեկամներն ու սիրելիները, որոնց մէջ էր Երեմիա, ամէն օր քովը կ'երթային ու երեկոյին կը դառնային Կ. Պոլիս: Ոմանք ալ անոր մօտ կը գիշերէին Սկիւտար: Ս. Սարգիս եկեղեցիի ծխականներէն քանի մը բանսարկուներ կը տարածայնեն՝ թէ Սկիւտար երթեալու-